ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 290-Ա/2 «18» դեկտեմբերի 2022թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N 308-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ «ՍՈՒՐԲ ԹԵՐԵԶԱՅԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՍՊԸ-ԻՆ ՏՐՎԱԾ N 176 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 6-րդ կետերով, 8-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված հավելված 15-ի 5.2-րդ կետի, 8-րդ կետի 2-րդ ենթակետի, 3-րդ ենթակետի ա.բ.գ. պարբերությունների, 4-րդ ենթակետի ա.բ. պարբերությունների, 6-րդ ենթակետի պահանջները, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի նոյեմբերի 23-ի N 1875-Ա հրամանի համաձայն իրականացված ուսումնասիրությունների արդյունքների մասին տեղեկանքը և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի N 138/1 եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարան» ՍՊԸ-ին ՀՀ կրթության և գիտության նախարարի 2003 թվականի մարտի 17-ի N 148-Ա/Ք հրամանով տրված միջին մասնագիտական կրթական ծրագրով գործունեության N 176 լիցենզիայի գործողությունը կասեցնել՝ լիցենզավորման կարգերով սահմանված լիցենզիայի պարտադիր պայմանների և պահանջների կատարված խախտումների՝ պրոֆեսորադասախոսական կազմի,

ուսումնական տարածքի և լաբորատոր ապահովվածության, ուսումնամեթոդական ապահովվածության, ուսումնաարտադրական պրակտիկայի, հաշվետվության ներկայացման, միջին մասնագիտական ուսումնական հաստատության գործունեությունը կարգավորող օրենսդրության պահանջներին չբավարարելու հիմքերով՝ մինչև խախտման պատճառների վերացումը:

2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լիցենզավորման գործակալությանը և միջին մասնագիտական կրթության վարչությանը՝ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ «Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարան» ՍՊԸ-ի միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորող ուսանողների հետագա ուսումնառությունն այլ ուսումնական հաստատություններում շարունակելու ուղությամբ՝ նրանց շահերն ու իրավունքները պաշտպանելու նպատակով:
3. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել նախարարության լիցենզավորման գործակալության պետ Ա.Արշակյանին:
4. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախարարի տեղակալ Ժ.Անդրեասյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

2/18/2022

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211